

«erit.am» ՊՈՐՏԱԼԻ ՍԻՐԵԼԻ ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐ

Օգոստոսի 12-ին նշվում է Երիտասարդության միջազգային օրը: Դուք ունեք 2 ամսից էլ քիչ ժամանակ, որպեսզի մասնակցեք պորտալի հայտարարած լուսանկարի մրցույթին որի խորագիրն է՝

«ԱՄԱՌ-2020. ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ, ԱՆԽԱԹԱՐ ԲՆՈՒԹՅՈՒՆ, ՄԱՔՈՒՐ ՄԻՋԱՎԱՅՐ»

Մրցույթի հիմնական սկզբունքն է արձակագիր-գրող Ֆրանց Կաֆկայի խոսքերը՝
Երիտասարդներն ուրախ են, որովհետև նրանք ունեն գեղեցիկը տեսնելու ունակություն: Ցանկացած ոք, ով պահպանում է գեղեցիկը տեսնելու ունակությունը, երբեք չի ծերանում:

Մրցույթի խորագրին համապատասխանող ձեր լուսանկարներում անպայման պիտի լինի գործող անձ (անձինք)՝ դուք կամ ձեր հարազատները, ընկերները: Պատկերեք ձեր սիրելի անկյունը Հայաստանի որևէ մարզում կամ ձեր բնակավայրում, ներկայացրեք ձեր գեղեցիկ ձեռնարկները՝ ուղղված բնության, պատմական հուշարձանների, ձեր և ձեր մերձավորների առողջության պահպանությանը: Պարտադիր է վերնագրել լուսանկարը կամ նշել տեղը, միջոցառման նպատակը, ձեր անուն, ազգանունը, այլ տեղեկություններ (հակիրճ): Մի՛ սահմանափակեք ձեր երևակայությունը: Լուսանկարեք և լուսանկարվեք:

Մրցույթը ոչ միայն ձեր ստեղծագործական ունակությունները բացահայտելու, այլև մեր երկրի գոլտրիկ անկյուններն ու գեղեցկությունը բացահայտելու միջոց է:

Հաղթողները կընտրվեն sms քվեարկությամբ: Քվեարկելու համար անհրաժեշտ է Ձեր նախընտրած նկարի կողքը ուղարկել 1041 կանոն համարին: Օրինակ 05 համարի նկարի օգտին քվեարկելու համար ուղարկում եք 05 1041 համարին:

1 SMS-ի արժեքն է 50 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ:

1 համարից կարող են ուղարկել անսահմանափակ քանակությամբ SMS հաղորդագրություն: Ամենաշատ sms հավաքած երեք լուսանկարները 1-ական օր կհայտնվեն մեր պորտալի առաջին էջում: Հաղթողները կստանան Հարություն Կալենցի, Հայկական զարդարվեստ եւ Այվազովսկի գրքերը:

Լուսանկարի չափերը պետք է լինի՝ 855px x 670px:

Լուսանկարի վրա չպիտի լինի ամսաթիվ, մակագրություն, այս կամ այն կազմակերպության գովազդ, դրանք չպիտի պարունակեն բռնության կամ խտրականության քարոզ:

Լուսանկարներն ուղարկել eritportal@esic.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Լուսանկարներն ուղարկելու վերջին ժամկետը՝ 2020 թվականի օգոստոսի 10-ը: